Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Եզրակացություն Վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների լիցենզավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.04.2020թ. կայացած նիստի

13.04.2020

Տիպ՝ Լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված հանձնաժողովների ծանուցումներ
Հայտատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն
«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մաս

Եզրակացություն
Վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների լիցենզավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.04.2020թ. կայացած նիստի
Հանձնաժողովը հրապարակեց իր եզրակացությունը.

1, Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.03.2020թ. թիվ 04/23-2/4608-2020 գրությունը, համաձայն որի «Վալկան» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.01.2017թ. տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-009 լիցենզիայի գործողությունը 26.03.2020թ-ից համարվել է կասեցված՝ 2020թ. երկրորդ եռամսյակի համար պետական տուրքի տարեկան գումարի մեկ քառորդ մասը (45000000 ՀՀ դրամ) մինչև 25.03.2020թ. չվճարելու համար և ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 04/23-2/24245-18 գրությունը, համաձայն որի «Վալկան» ՍՊԸ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.01.2017թ. տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-009 լիցենզիայի գործողությունը 26.12.2018թ-ից համարվել էր կասեցված՝ 2019թ. առաջին եռամսյակի համար պետական տուրքի տարեկան գումարի մեկ քառորդ մասը (37500000 ՀՀ դրամ) մինչև 25.12.2018թ. չվճարելու համար, ինչպես նաև «Վալկան» ՍՊԸ-ի կողմից 27.03.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված դիմումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Վալկան» ՍՊԸ-ին 01.01.2017թ. տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-009 լիցենզիայի գործողությունը 27.03.2020թ-ից դադարեցնելու վերաբերյալ՝
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.01.2017թ. «Վալկան» ՍՊԸ-ին տրված թիվ ԽՏ-009 լիցենզիան ուժը կորցրած ճանաչել երկու հիմքով.
- «Շահումով խաղերի, ինտերնետ շահուոմվ խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ,
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ:
2, Հիմք ընդունելով «Մանռու» ՍՊԸ-ի կողմից 31.03.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված դիմումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2019թ. «Մանռու» ՍՊԸ-ին տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-011 լիցենզիայի գործողությունը 31.03.2020թ.-ից դադարեցնելու մասին, առաջնորդվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով.
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2019թ. «Մանռու» ՍՊԸ տրված խաղատան կազմակերպման թիվ ԽՏ-011 լիցենզիան ուժը կորցրած ճանաչել՝համաձայն իր դիմումի՝ 31.03.2020թ.-ից:
3, Հիմք ընդունելով «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից 13.03.2020թ. ներկայացված գրությունը, կից փաստաթղթերը և ղեկավարվելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով «ՎԻՎԱՌՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից 13.03.2020թ. ներկայացված ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգի փոփոխություններին և լրացումներին (այսուհետ՝ Կանոնակարգի փոփոխություններ և լրացումներ) տալ համաձայնություն վերապահումով ստորև նշված թերությունները շտկելուց հետո.
- Կանոնակարգի փոփոխությունների և լրացումների 2-րդ կետով լրացվող «Ֆենտզի սպորտ» խաղում «Էքսպրես Դասական» տեսակում թիմ ստեղծելու եղանակի նկարագրության մեջ անհասկանալի է «Կախված» բառի օգտագործումը:
- Կանոնակարգի փոփոխությունների և լրացումների 6-րդ և 9-րդ կետերով փոփոխվող «Թալիսման» խաղի համար սահմանված խաղադրույքների նվազագույն և առավելագույն չափերը անհրաժեշտ է համապատասխանեցնել իրար:

Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1

Հեռ.՝ +374 11 800368

Էլ. փոստ՝ senik.vardanyan@minfin.am